



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ -ի անվանական արժեկտրոնային դոլարային և դրամային պարտատոմսերի թողարկման վերաբերյալ

Սույնով տեղեկացնում ենք, որ 2017 թվականի նոյեմբերի 23-ին «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն նախատեսում է իրականացնել անվանական արժեկտրոնային դոլարային և դրամային պարտատոմսերի թողարկում և տեղաբաշխում:

Պարտատոմսերը տեղաբաշխվելու են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ի առաջնային տեղաբաշխման հարթակում՝ ստանդարտ փակ (եվրոպական) մեկանգամյա աճուրդի անցկացման միջոցով:

Որպես տեղաբաշխող հանդես է գալիս «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ-ն, իսկ թողարկվող պարտատոմսերի ցուցակումից հետո վերջինս իրականացնելու է նաև շուկա ստեղծողի (market maker) գործառույթներ:

Պարտատոմսերի ազդագիրը գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկում 2017թ.-ի հոկտեմբերի 27-ին:

Ազդագրի էլեկտրոնային տարբերակը հրապարակված է «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի և «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ-ի պաշտոնական ինտերնետային կայքերում, համապատասխանաբար՝ www.globalcredit.am և www.renesa.am հասցեներով:

Թողարկման հիմնական պայմանները ներկայացվում են ստորև.

Առաջին տրանշ՝ դոլարային պարտատոմսեր

Պարտատոմսերի դասը	Անվանական արժեկտրոնային
Պարտատոմսերի ձևը	Ոչ փաստաթղթային
Պարտատոմսերի փոխարկելիությունը	Ոչ փոխարկելի
Պարտատոմսերի շրջանառության ձևը	Ազատ շրջանառության իրավունքով
Պարտատոմսերի տեղաբաշխման եղանակը	Չերաշխավորված
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար



Պարտատոմսերի քանակը	10,000 (տասը հազար) հատ
Թողարկման ընդհանուր ծավալը	1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար
Արժեկտրոնային եկամտաբերությունը	7 (յոթ) %
Արժեկտրոնային եկամուտների վճարումը	Կիսամյակային պարբերականությամբ
Ուղղորդիչ նվազագույն գինⁱ	100.00 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար
Շրջանառության ժամկետը	36 ամիս
Տեղաբաշխման օրը	23.11.2017թ.
Տեղաբաշխման սկիզբը	23.11.2017թ. ժամը 11:00
Տեղաբաշխման ավարտը	23.11.2017թ. ժամը 13:30
Մարման օրը	Պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկված 36-րդ ամսվա համապատասխան օրը
Պարտատոմսերի գնի հաշվարկման բանաձև	$P = \frac{C}{f} \sum_{i=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{f * 100}\right)^{i-1+\tau}} + \frac{A}{\left(1 + \frac{y}{f * 100}\right)^{N-1+\tau}}$ $\tau = \frac{DSN}{DCC}$ <p>որտեղ՝</p> <p><i>P</i> - Պարտատոմսի գին,</p> <p><i>f</i> - արժեկտրոնի վճարման հաճախականություն,</p> <p><i>y</i> - պարտատոմսի մինչև մարում եկամտաբերություն,</p> <p><i>N</i> - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,</p> <p><i>C</i> - տարեկան արժեկտրոնի չափը</p> <p><i>DSN</i> - գործարքի կատարման օրվան (settle date)</p>



	<p>հաջորդող արժեկտրոնի մարման /անվանական արժեքի մարման ամսաթվի և գործարքի կադարման օրվա միջև եղած փաստացի օրերի քանակն է,</p> <p>DCC- գործարքի կադարման օրվան նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի կադարման օրվան հաջորդող արժեկտրոնի վճարման օրը եղած փաստացի օրերի քանակն է:</p>
<p>Օրերի հաշվարկման պայմանականություն</p>	<p>Փաստացի/փաստացի (ACT/ACT)</p>
<p>Արժեկտրոնի կուտակման բանաձև</p>	$AI = FV * \frac{C}{f} * \frac{DCS}{DCC}$ <p>որտեղ՝</p> <p>AI – կուտակված արժեկտրոնային եկամուտ,</p> <p>FV – պարտավորման անվանական արժեք,</p> <p>C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույք</p> <p>f – արժեկտրոնի վճարման հաճախականություն (կիսամյակային վճարումների դեպքում f=2),</p> <p>DCS – գործարքի կադարման (settlement) օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կադարման օրվա միջև եղած փաստացի օրերի քանակն է,</p> <p>DCC – գործարքի կադարման օրվան նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի կադարման օրվան հաջորդող արժեկտրոնի վճարման օրը եղած փաստացի օրերի քանակն է:</p>



Երկրորդ տրանշ՝ դրամային պարտատոմսեր

Պարտատոմսերի դասը	Անվանական արժեկտրոնային
Պարտատոմսերի ձևը	Ոչ փաստաթղթային
Պարտատոմսերի փոխարկելիությունը	Ոչ փոխարկելի
Պարտատոմսերերի շրջանառության ձևը	Ազատ շրջանառության իրավունքով
Պարտատոմսերի տեղաբաշխման եղանակը	Չերաշխավորված
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ
Պարտատոմսերի քանակը	30,000 (երեսուն հազար) հապ
Թողարկման ընդհանուր ծավալը	300,000,000 (երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամ
Արժեկտրոնային եկամտաբերությունը	10 (տասը) % տարեկան
Արժեկտրոնային եկամուտների վճարումը	Կիսամյակային պարբերականությամբ
Ուղղորդիչ նվազագույն գին ⁱⁱ	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ
Շրջանառության ժամկետը	12 ամիս
Տեղաբաշխման օրը	23.11.2017թ.
Տեղաբաշխման սկիզբը	23.11.2017թ. ժամը 11:00
Տեղաբաշխման ավարտը	23.11.2017թ. ժամը 13:30
Մարման օրը	Պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկված 12-րդ ամսվա համապատասխան օրը
Պարտատոմսերի գնի հաշվարկման բանաձև	$P = \frac{C}{f} \sum_{i=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{f * 100}\right)^{i-1+\tau}} + \frac{A}{\left(1 + \frac{y}{f * 100}\right)^{N-1+\tau}}$ $\tau = \frac{DSN}{DCC}$



	<p>որպեղ՝</p> <p><i>P</i> - Պարտավորմանի գին,</p> <p><i>f</i> - արժեկտրոնի վճարման հաճախականություն,</p> <p><i>y</i>- պարտավորմանի մինչև մարում եկամտաբերություն,</p> <p><i>N</i> - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,</p> <p><i>C</i> - տարեկան արժեկտրոնի չափը</p> <p><i>DSN</i> - գործարքի կատարման օրվան (<i>settle date</i>) հաջորդող արժեկտրոնի մարման /անվանական արժեքի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած փաստացի օրերի քանակն է,</p> <p><i>DCC</i>- գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի վճարման օրը եղած փաստացի օրերի քանակն է:</p>
Օրերի հաշվարկման պայմանականություն	Փաստացի/փաստացի (<i>ACT/ACT</i>)
Արժեկտրոնի կուտակման բանաձև	$AI = FV * \frac{C}{f} * \frac{DCS}{DCC}$ <p>որպեղ՝</p> <p><i>AI</i> – կուտակված արժեկտրոնային եկամուտ,</p> <p><i>FV</i> – պարտավորմանի անվանական արժեք,</p> <p><i>C</i> – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույք</p> <p><i>f</i> – արժեկտրոնի վճարման հաճախականություն (եռամսյակային վճարումների դեպքում <i>f</i>=4),</p>



	<p><i>DCS – գործարքի կապարման (settlement) օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուրակման սկզբի ամսաթվի և գործարքի կապարման օրվա միջև եղած փաստացի օրերի քանակն է,</i></p> <p><i>DCC – գործարքի կապարման օրվան նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի կապարման օրվան հաջորդող արժեկտրոնի վճարման օրը եղած փաստացի օրերի քանակն է:</i></p>
--	---

Պարտատոմսերի պոտենցիալ գնորդների նկատմամբ սահմանափակումներ չկան:

Պարտատոմսերի տեղաբաշխմանը մասնակցել ցանկացողները կարող են դիմել «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ ֆոնդային բորսայի անդամ հանդիսացող ընկերություններին, որոնց ցանկն ու կոնտակտային տվյալները ներկայացված են www.nasdaqomx.am ինտերնետային կայքում:

Պարտատոմսերում ներդրում կատարելու համար անձինք պետք է նախապես դիմեն «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի հաշվի օպերատորներին՝ նրանց միջոցով արժեթղթերի դեպո հաշիվների բացման և սպասարկման համար: ՀԿԴ-ի օպերատորների ցանկը ներկայացված է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.cda.am:

Պարտատոմսեր ձեռք բերող անձը, նախքան ներդրում իրականացնելը, պարտավոր է նաև ցանկացած բանկում իր անվամբ բացել դոլարային և դրամային բանկային հաշիվ (նման հաշիվներ չունենալու դեպքում):

Լրացուցիչ տեղեկությունների կամ հարցերի դեպքում կարող եք զանգահարել «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ հետևյալ հեռախոսահամարներով՝ +(374 11) 700 100, 700 200 կամ «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ հետևյալ հեռախոսահամարով՝ +(374 10) 54 87 87:

ⁱ Ազդագրով սահմանված կարգով և Թողարկողի ու Տեղաբաշխողի փոխադարձ համաձայնությամբ ամրագրվել է ուղղորդիչ նվազագույն գին, որից ցածր գնով պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքում ներկայացվող հայտերը չեն բավարարվելու:

ⁱⁱ Ազդագրով սահմանված կարգով և Թողարկողի ու Տեղաբաշխողի փոխադարձ համաձայնությամբ ամրագրվել է ուղղորդիչ նվազագույն գին, որից ցածր գնով պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքում ներկայացվող հայտերը չեն բավարարվելու: